



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՆՐԱՄԱՆ

Թիվ 15 - ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ
ԳՈՐԾԵՐՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ (ԽՄԲԵՐՈՒՄ)
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2) Ընտանիքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու վերաբերյալ տեղեկանքի ձևը՝ համաձայն հավելված 2-ի,

3) Ընտանիքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառումից հանելու վերաբերյալ տեղեկանքի ձևը՝ համաձայն հավելված 3-ի,

4) Ընտանիքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու վերաբերյալ տեղեկատու քարտի ձևը՝ համաձայն հավելված 4-ի,

5) Ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն հավելված 5-ի,

6) Ընտանիքում բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտի ձևը՝ համաձայն հավելված 6-ի:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի, մարզային վարչությունների և դրանց ենթակա տարածքային բաժինների պետերին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպել հրամանի ուսումնասիրությունը և մեկամսյա ժամկետում ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների /խմբերի/ ծառայողներից ընդունել ստուգարքներ:

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության կողմից ներկայացված հայտերին համապատասխան ապահովել սույն հրամանով հաստատված ձևաթղթերի տպագրումը:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ



Վ. ՕՍԻՊՅԱՆ

«17» 07 2019թ.
ք.Երևան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ (ԽՄԲԵՐՈՒՄ) ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) (այսուհետ՝ մասնագիտացված ստորաբաժանում) ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքի, ինչպես նաև անտեսման դեպքում բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու վերաբերյալ իրավահարաբերությունները:
2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.
 - 1) աջակցության կենտրոն՝ «Սոցիալական աջակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող պետական կազմակերպություն.
 - 2) ընտանիքում բռնություն գործադրած անձ՝ ֆիզիկական անձ, որի նկատմամբ՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում.
 - 3) ընտանիքում բռնության ենթարկված անձ՝ ֆիզիկական անձ, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում բռնությունից.
 - 4) ոստիկանության իրավասու ծառայող՝ ոստիկանության՝ ընտանիքում բռնության կանխարգելման եւ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում մասնագիտացված ստորաբաժանման ծառայող.

